ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՈՌՈԳՈՂ ԵՎ ՄԱՔՐՈՂ ՋՈՒՐ Է:

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Հայ. 1:3 - Երանելի են այս մարգարէութեան խօսքերը կարդացողը և լսողները, և սորանում գրուածները պահողները. որովհետև ժամանակը մօտեցել է:

2 Տիմ. 3:16-17 - 16 Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ խրատելու համար. 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար:

***biblía*, Byblos (քաղաքի անուն) "the books" — Փյունիկ-Ասորի «Լիբանան»**

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մենք վերստին ծնվեցինք (մկրտվեցինք) երբ լսեցինք Աստծո Խոսքը, իսկ ջրի մկրտությունը խորհրդանշում է թե ինչ կատարվեց մեզ հետ երբ Հիսուսին ընդունեցինք Տեր և անձնական Փրկիչ:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 12, ՍԱՂ. 105:40-41

Սաղ. 105:40-41 - 40 Խնդրեցին և նա լորամարգիներ բերաւ. և երկնքի հացով կշտացրեց նորանց: 41 Վէմը պատառեց և ջուրեր բղխեցին. գետեր գնացին անջուր տեղերումը:

1 Կոր. 10:4 - 4 Եւ բոլորն էլ նոյն հոգևոր խմելիքը խմեցին. որովհետև խմում էին հոգևոր այն վէմից, որ գնում էր նրանց հետ և այն վէմը ինքը՝ Քրիստոսն էր:

- ***Ի՞նչ տեսակի ըմպելիքի մասին է Պողոսը նշում և ի՞նչ ժայռից: Ո՞վ է այդ ժայռը: Երբ մենք ժամանակ ենք հատկացնում Աստծո Խոսք կարդալուն, մենք մեզ ոռոգում ենք:***
- ***Մենք խոսքերի պատերազմի մեջ ենք: Մենք պետք է ուշադիր լինենք, թե ում խոսքերին ենք հավատում:***

1. ԱՍՏԱՆԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԽՈՐՏԱԿԵԼ ՄԵԶ:

Հայ. 12:9,12,15 - 9 Եւ վայր գցվեց մեծ վիշապը՝ այն առաջի օձը, որ Բանսարկու և սատանա է կոչվում, այն բովանդակ աշխարհը մոլորեցնողը վայր գցվեց երկրի վրա և նրա հետ ընկան նաև նրա հրեշտակները:

12 Դրա համար թող ուրախ լինի երկինքը և բոլոր նրանք, որ բնակւում են նրա մէջ. վա՜յ երկրին և ծովին, [և նորանցում բնակողներին] որ Բանսարկուն վայր իջաւ ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն ունի, գիտենալով, որ նա քիչ ժամանակ ունի ապրելու:

15 Եւ օձն իր բերանից գետի պէս ջուր թափեց այն կնոջ ետևից, որպէսզի նրան ընկղմի:

- ***ՋՈՒՐԸ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է ԲԱՌԵՐԻ – ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ, ՍԱՏԱՆԱՅԻ ԵՎ ՄԵՐ: Դու երբևէ զգացե՞լ ես մեղադրող խոսքերի հեղեղ քո կյանքում:***

*Սաղ. **69:1** - 1 Փրկի՛ր ինձ, Աստուա՛ծ, քանզի ջրերը հասան իմ անձին, ես ընկղմուեցի խոր անդնդի մէջ, որտեղ ինձ համար հանգիստ չկա:*

*Սաղ. **69:14-15** - 14 Ազատի՛ր ինձ ցեխից, որ չխրվեմ և փրկվեմ իմ ատելիներից ու խոր ջրերից:*

15 Ջրերի հորձանքները թող չկլանեն ինձ, և անդունդները ինձ թող չընկղմեն, ոչ էլ ջրհորն ինձ վրա բերանն իր փակի:

*Սաղ. **93:3** - 3 Գետերը բարձրացնում են, Տէր, գետերը բարձրացնում են իրանց ձայնը, գետերը բարձրացնում են իրանց գոռոցը:*

- ***Սաղմոս 93:3-4-ում մենք կարդում ենք, որ ջրերը բարձրացնում են իրենց ձայնը, իսկ ո՞վ է ավելի հզոր: Ի՞նչ հույս է քեզ տալիս այս համարը:***

*Սաղ. **93:4** - Շատ ջրերի ձայնից ավելի զօրաւոր են ծովի ալիքները. ավելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ:*

*Մատ. **7:24-27** - 24 Արդ՝ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է և նորանց կատարում, կնմանացնեմ նորան մի իմաստուն մարդու որ իր տունը շինեց ժայռի վրա: 25 Եւ անձրևն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և նա չկործանվեց. որովհետև ժայռի վրա հաստատված էր: 26 Եւ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է և նորանց չի կատարում, նա կնմանվի մի անխելք մարդի՝ որ իր տունը շինեց ավազի վրա: 27 Եւ անձրևն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին, և այն տանը զարկեցին, և նա կործանվեց, և նորա կործանումը մեծ էր:*

*Մատ. **12:34** - ...սրտի ավելացածից կխօսի բերանը:*

- ***ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է, ՍԱՏԱՆԱՆ ԽՈՍՈՒՄ Է, ՆԱԵ ԽՈՍՈՒՄ Է ՄԱՐԴԸ:***

*Առակ. **18:4** - Խոր ջուրեր են մարդու բերանի խօսքերը, բղխող գետ է իմաստութեան աղբյուրը:*

*Առակ. **18:21** - 21 Մահն ու կեանքը լեզուի ձեռքին է:*

*Առակ. **6:2** - 2 Դու բռնվել ես քո բերանի խօսքով, և քեզ բռնվել ես տվել քո բերանի ասածներով:*

- ***Աստված մեզ համար խոսում է կյանքի խոսքեր, իսկ սատանան՝ մահվան խոսքեր: Մենք պետք է որոշենք համաձայնել Աստծո խոսքերի հետ:***

*Ես. **59:19** - 19 Երբոր թշնամին գետի պէս գա, Տիրոջ հոգին նորան կփախցնէ:*

When the enemy shall come in like a flood, the Spirit of the LORD shall lift up a standard against him.

Օրինակ: Օվկիանոսը իր ափերից դուրս չի գալիս, որովհետև Աստված իր Խոսքը դրել է որպես սահման Օվկիանոսի և ափի միջև:

ՍԱՏԱՆԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԽՈՐՏԱԿԵԼ ՄԵԶ:

2. ՍԱՏԱՆԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՍՈՎԱՄԱՀ ԱՆԵԼ ՄԵԶ:

*Ամո. **8:11** - 11 Ահա օրեր են գալիս, ասում է Տէր Եհովան, որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թէ հացի սով և ոչ ջրի ծարաւ, այլ Տիրոջ խօսքը լսելու:*

Քանի որ կարող ես ապրել առանց ջրի? Mahatma Gandi – 21days of complete starvation.

- *Եթե Աստծո Խոսքը մեր ամենօրյա հացն է, ապա սատանան փորձում է սովամահ անել մեզ՝ խանգարելով, որպեսզի չկարդանք և չկհասկանանք Աստվածաշունչը:*

Մար. 4:14-15 - 14 Սերմողը խօսքն է սերմում. 15 Եւ նորանք են ճանապարհի վերայինները, ուր բանը սերմվում է, և երբոր լսում են, շուտով գալիս է սատանան և վեր առնում նորանց սրտերում սերմած խօսքը:

Սաղ. 119:11 - Իմ սրտումը թագցրի քո խօսքերը, որ չմեղանչեմ քեզ դէմ:

- *ՀԻՇԵՔ: Աստված մեզ համար խոսում է կյանքի խոսքեր, իսկ սատանան՝ մահվան խոսքեր: Մենք պետք է որոշենք համաձայնել Աստծո խոսքերի հետ:*

ՍԱՏԱՆԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԽՈՐՏԱԿԵԼ ՄԵԶ:
ՍԱՏԱՆԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՍՈՎԱՄԱՀ ԱՆԵԼ ՄԵԶ:
3. ՀԻՍՈՒՍՆ ՈՒԶՈՒՄ Է ԼՑՆԵԼ ՄԵԶ:

1 Կոր. 2:13-14 - 13 Որն էլ խօսում ենք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սովորած խօսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորներն հոգևորների հետ համեմատելով: 14 Բայց ոչ հոգևոր մարդը Աստծու Հոգուց եկած ճշմարտութիւնները չի ընդունում, որովհետև այդ յիմարութիւն է նրա համար. և չի կարող հասկանալ, քանզի հոգևոր կերպով են քննվում դրանք:

Աստվածաշունչը հոգևոր գիրք է, որ գրվել է Աստծո Հոգով, հոգևոր էակների համար:

Հով. 4:7-14 - 7 Արդ Սամարիայից մի կին եկավ, որ ջուր հանէ. Հիսուսը նորան ասեց. Ինձ ջուր տուր խմեմ: 8 Որովհետև նորա աշակերտները քաղաք էին գնացել, որ կերակուր առնեն: 9 Սամարացի կինն էլ ասեց նորան. Դու որ Հրէա ես, ինչպէ՞ս ես ինձանից ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ. որովհետև Հրէաները չեն խառնվում Սամարացիների հետ: 10 Հիսուսը պատասխանեց և ասեց նորան, Եթէ Աստուծո պարգևը գիտենայիր, և թէ ով է նա, որ քեզ ասում է, թէ՝ Տուր ինձ խմել, ապա դու նորանից կխնդրէիր, և նա կենդանի ջուր կտար քեզ: 11 Կինը նորան ասեց. Տէր, դու դուլ էլ չունես, և հորը խոր է. ապա որտեղի՞ց ունես կենդանի ջուրը: 12 Մի՞թէ դու ավելի մեծ ես քան է մեր հայր Հակոբը, որ այս հորը տվեց մեզ. և ինքը սրանից խմեց, և նորա որդիները և նորա անասունները: 13 Հիսուսը պատասխանեց և ասեց նորան, Ամեն այդ ջրից խմողը դարձեալ կծարավի. բայց ով որ խմէ այն ջրից որ ես կտամ նորան, նա հավիտեան չի ծարավի: 14 Այլ այն ջուրը, որ ես կտամ նորան, ջրի աղբյուր կլինի նորանում, որ հավիտենական կեանքի համար կբղխէ:

Օրինակ: Իմ երազում թե ինթպես Հիսուսը կանգնեց ու ասաց ջուր տուր ինձ...

- *Աստծո Խոսքի ջրով լվացվելը մաքրազատում է մեզ: Այն նուրբ է և գործում է ներսից դեպի դուրս: Աստծո խոսքը մաքրում է մեր մտքերը:*

Եփ. 5:25-26 - 25 Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և իր անձը մատնեց նորա համար. 26 Որ նորան սրբացնէ՝ մաքրելով ջրի լվացանով՝ խօսքով.

ԱՄՓՈՓՈՒՄ

- *Սատանան փորձում է խորտակել մեզ և սովամահ անել, բայց Հիսուսն ուզում է լցնել մեզ:*